8206 №90.

# ՍԵՒ ՀԱՑԵՐ

Թարգմ.

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

Արտատպուած «Լումայ» հանդիսից

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ս. Թօմինեանի
1901

85
Ա-41

251

# «ՎՈՒՄԱՅ»

## Գրաչան հանդիսից արտատպած գրքերը

1. Խ. Յարութիւնեան. Սահմանները Պալասանեան գ. 25 կ.
2. Պօտապէնկօ. Մի կտոր հաց. թարգմ. Դ. Ք. Աղանեանց գ. 10 կ.
3. Սենկևիչ. Դէպի Աթէնք. թ. Դ. Ք. Աղանեանց գ. 15 կ
4. Դաստիարակութեան գործիքները թարգմ. Ս. Մանդինեան գ. 30 կ.
5. Բակ. Կիլիկիա գ. 15 կ.
6. Ն. Տէր-Կարապետեան. Խաչատուր Աբովեան գ. 60 կ.
7. Անժամանակ թատրոն և ընթերցանութիւն. թարգմ. Ս. Մանդինեան գ. 25 կ.
8. Խ. Յարութիւնեան. Աշակերտի լուշատետրը գ. 30 կ.

85
Ա-41

10 NOV 2011

# ՍԵՒ ՀԱՑԵՐ

Թարգմ.
ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

Արտատպուած «Լումայ» հանդիսից

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ս. Թօտինեանի
1901

3 0 JUL 2013

8206

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Октября, 1901 г.

59325-66

# ՍԵՒ ՀԱՑԵՐ

Տասն և չորսերորդ դարու սկզբներին էր։ Նիկողայոս Նէրլին դրամատուն ունէր Ֆլորէնցիա քաղաքում։ Նա ամբողջ օրը զբաղուած էր մատեաններում թուանշաններ գրելով. ժամը

երեքին նա նստում էր իւր գրասեղանի առաջ. երբ ինն էր զարկում՝ նա դարձեալ մեխուած էր միևնոյն տեղը և շարունակում էր գրել թուանշաններ։

Դրամատունը փոխարինաբար փող էր տալիս և կայսեր և պապին, և եթէ սատանային էլ չէր տալիս, միայն նրա համար, որ վախենում էր մի գուցէ իւր գործերը վատ գնան չար ոգու պատճառով, որ ընդունակ է ամեն տեսակ խորամանկութիւններին։ Նիկողայոս Նէրլին համարձակ էր և ոչոքի չէր հաւատում։ Նա մեծ հարստութիւն ձեռք բերեց, հարստահարեց շատերին և տհա թէ ինչու նո-

ըան ամենքը յարգում էին Ֆլո-
ըէնցիայում։ Նա ապրում էր մի
պալատում, ուր աշխարհի լոյսը
թափանցում էր միայն նեղ ու
ցածր պատուհանների միջով։

Նիկողայոս Նէրլիի պալատը
պատած էր պատնէշով և շղթա-
ներով։ Ներսից պատերը զար-
դարուած էին զանազան հմուտ
գեղարուեստագէտների նկարնե-
րով. ամեն տեղ տեսնւում էին բա-
րեգործ կանայք, պատրիարքներ
և մարգարէներ, կտաւների վերայ
նկարուած էին զանազան բարե-
պաշտական պատմութիւններ.
իւր բարի գործերով Նիկողայոս
Նէրլին ամենքին այնպէս էր
հրապուրել, որ բոլորն էլ փա-

ուաւորում էին նորա հարստու-
թիւնը։ Քաղաքից դուրս նա մի
հիւանդանոց շինեց, որի գեղա-
նկար պատի վերայ ձևակեր-
պուած էին դրամատիրոջ կեան-
քի ամենապայծառ գործերը։ Ի-
բրև նշան շնորհակալութեան, որ
նա զոհել էր մի գումար Santa-Maria Novella եկեղեցու շի-
նութեան աւարտման համար,
նորա պատկերը կախած էր այդ
եկեղեցու պատի վրայից։ Նէր-
լին նկարուած էր չոգած ս.
Կոյսի ոտների մօտ, խաչած ձեռ-
ներով։ Նորան կարելի էր հեշ-
տութեամբ ճանաչել իւր կար-
միր բրդէ թասակից, մազէ աս-
տառով հանդերձից, չաղ երեսից

և փոքր աչքերից։ Նորա բարի կինը, Մօնան, որից կարծեմ ոչ ոք մի բարիք տեսած չունէր, ազնիւ և տխուր նայուածքով կանգնած էր ս. Կոյսի միւս կողմը, աղօթողի խաղաղ արտայայտութեամբ։

Նէրլին հասարակապետութեան առաջին քաղաքացիներից մէկն էր. այն յարգանքը, որ նա վայելում էր գլխաւոր կառավարիչների կողմից շնորհիւ իւր հարստութեան, երբէք չէր պակասում։

Մի ձմեռային օր, երբ Նէրլին վերադառնում էր իւր պալատը սովորականից ուշ, իւր տան առաջ շրջապատեցին նորան մի խումբ կիսամերկ աղքատներ,

ձեռքերը դէպի նա մեկնած։

Նա կոպտութեամբ վռնդեց նոցա։ Բայց աղքատները քաղցածութիւնից սոված գայլերի համարձակութիւն էին ստացել։ Նոքա շրջապատեցին դրամատիրոջ և հաց էին խնդրում խրատ և աղաչող ձայներով։ Նէրլին արդէն կռացել էր քար վերցնելու աղքատներին խփելու համար, երբ յանկարծ տեսաւ իւր ծառաներից մէկին, որ սև հացերով լի մի կողով գլխին տանում էր տուն ծառաների համար։

Դրամատէրը կանչեց նորան, ձեռները կոխեց կողովի մէջ և միջի բոլոր հացերը ածեց աղ-

քատների առաջ։ Յետոյ տուն վերադառնալով պարկեց ու քնեց։ Երազում նա տեսաւ, որ ինքը կաթուածից մեռաւ և այնպէս շուտ, որ նորան թւում էր թէ գտնւում է նոյն իսկ իւր անկողնում. այնտեղ, ուր գոյութիւն չունի ոչ մի լոյս, նորան երևեցաւ Միքայէլ Հրեշտակապետը, որը խաւարի մէջ լուսաւորուած էր իրենից ճառագայթած լոյսով։

Հրեշտակապետը բռնած ունէր ձեռին մի կշիռ և բարձում էր նորա թաթերի վերայ։ Նէրլին երբ տեսաւ կշռի մի թաթի վերայ դարսուած մի այրու թանկագին իրեր, որոնք գրաւ էին դրուած իւր մօտ, անիրաւ կեր-

պով ձեռք բերուած փողերն ու մի քանի ոսկէ սիրուն դրամներ, որպիսին բացի իրենից ուրիշ ոչ ոք չունէր և որ ինքը ձեռք էր բերել վաշխառութեամբ կամ խաբեբայութեամբ և որ այդ ամենից խիստ ծանրանալով՝ կշռի թաթը իջաւ բաւական ցած, զգաց՝ որ իւր կեանքի վերջը մօտեցել է և որ Հրեշտակապետն արդէն դատելու է իրան։

— Սուրբդ Միքայէլ, ասաց նա, եթէ դուք կշռի մի թաթի վերայ դարսում էք ամեն բան, ինչ որ կեանքում ես ձեռք եմ բերել, ապա ուրեմն խնդրեմ միւսի վերայ էլ դարսէք այն բոլոր ընտիր գործերս, որոնք

գեղեցիկ կերպով ցոյց են տալիս իմ բարեպաշտութիւնը։ Զմռուանաք Santa-Maria Novella տաճարը, որի գրեթէ երրորդ մասից աւելին իմ հաշուով եմ կառուցել, քաղաքից դուրս գտնուող հիւանդանոցը գեղանկար ճակատով։

Հրեշտակապետն այս բոլորը դարսեց կշռի միւս թաթի վերայ, բայց նա չհաւասարուեց միւսին։ Դրամատէրը սաստիկ անհանգիստ եղաւ։

Ո՛վ սուրբ Միքայէլ, — շարունակեց նա, — էլի լաւ որոնեցէք։ Այդ թաթի վերայ չդրիք ո՛չ ս. Յովհաննէսի խաչալուսալի աւազանս, ո՛չ ս. Անդրէասի ամ-

բիոնը, ուր բնական մեծութեամբ նկարուած է Յիսուս Քրիստոսի մկրտութեան պատկերը։ Այդ գործը ինձ մեծ փոշ է արժեցել։

Հրեշտակապետը ամբիոնն ու աւազանն էլ դարսեց Հիւանդանոցի վերայ, բայց թաթը չը ծանրացաւ։ Սառը քրտինքը վրայ տուեց Նիկողայոս Նէրլիի ճակատին։

— Ս. Հրեշտակապետ, արդեօք ճիշտ է ձեր կշիռը, հարցրեց նա։

Միքայէլ հրեշտակապետը ժըպտալով պատասխանեց, թէ չնայելով որ այն կշիռը պարիզեան փոխատու գանձարանների և Վենետկի սեղանաւորների կշիռների օրինակով չեն շինուած, բայց

միանգամայն անսխալ է ցոյց տալիս։

— Հապա սա ինչ բան է, հոգ-ւոց հանելով վրայ բերեց Նիկո-ղայոս Նէրլին գունատուած.— այս տաճարը, այս հիւանդանոցը իւր բոլոր մահճակալներով, այս ամբիոնը, աւազանը, — մի՞թէ սո-քա յարգի կամ թռչունի փե-տուրից ծանր չե՞ն։

— Տեսնո՞ւմ էք, Նիկողայոս, ա-սաց հրեշտակապետը, տակաւին ձեր բոլոր ապօրինի գործերը գերակշռում են ձեր բարի գոր-ծերի թեթեւ կշռին։

— Ուրեմն գժո՞խք պիտի գնամ, հարցրեց Ֆլօրէնցացին։ Եւ եր-կիւղից նորա ատամները սկսե-

ցին խփուիլ միմեանց։

— Համբերութիւն ունեցիր, Նիկողայոս Նէրլի, համբերութիւն, — վրայ բերեց Միքայէլ հրեշտակապետը։ — Դեռ մենք չվերջացրինք մեր գործը, ահա դեռ այս էլ մնում է։

Եւ սրբազան Միքայէլը վերցրեց այն սև հացերը, որ հարուստը նախընթաց երեկոյին թափել էր աղքատների առաջ։ Նա այդ հացերը դարսեց բարի գործերի թաթի վերայ և թաթը իսկոյն ցած իջաւ, միւս թաթը բարձրացաւ և երկուսն էլ հաւասարուեցան միմեանց։ Կշռի նժարը չթեքուեց ոչ աջ և ոչ ձախ. սլաքը ցոյց էր տալիս եր-

կու ծանրութիւնների և հաւասարակշիռը։ Դրամատէրը դժուարանում էր հաւատալ իւր աչքերին։

Հրեշտակապետն ասաց նորան.

— Տեսնում ես, Նիկողայոս Նէրլի,— դու անպէտք ես թէ երկընքի և թէ դժոխքի համար։ Դնա, դարձիր Ֆլորէնցիա, քո քաղաքում շատացրու այդ հացերը, որ դու բաժանել ես գիշերով, որպէսզի ոչոք չտեսնէ — և դու փրկուած կլինիս։ Երկինքը միայն զղջացող աւազակի և արտասուող յանցաւորի առաջ չէ բացւում։ Տիրոջ ողորմութիւնը սահման չունի. նա փրկում է նաև ապաշաւող մե-

ծատուՆին։ Դու ևս այդպէս ե-
ղիր։ Աւելացրու այն հացերը,
որոնց արժէքը աչքովդ տեսար
իմ կշռի մէջ։ Գնա։

Նիկողայոս Նէրլին զարթնեց։
Նա վճռեց հետևել հրեշտակա-
պետի խորհրդին և աւելցնել
աղքատների հացերը, որպէսզի
երկնքի արքայութիւնը ժառան-
գէ։

Այն երեք տարում, որ նա
անցրեց երկրիս վերայ իւր առա-
ջին մահից յետոյ, նա կարեկ-
ցում էր թշուառներին և շատ
էր օգնում աղքատներին։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ. ԳՈՐԾՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм.ССР
Ս. ԱՄ. Ա. Մասիսյան

9. Սա. Աւետիքեան. Ղեկավարներ գ. 40 կ.

10. Պեստալոցցի. Լինհարդ և Գերտրուդ. թարգմ. Խ. Յարութիւնեան գ. 1 ր. 50 կ.

11. Մելքիսեդեկ եպիս. Մուրատեան. Պետրոս Շանշեան. պատկերով. գ. 50 կ

12. Խ. Յարութիւնեան. Զգացմունքների աշխարհ գ. 30 կ.

13. Յար. Թումանեան. Մելիք-Իսուսուփ. պատմ. պոէմա գ. 20 կ.

14. Մ. Եօկալի. Ուրացողը. թ. Ի. Յարութիւնեանց գ. 20 կ.

15. 1901. ս. Էջմիածնի ԺԶ դարադարձը գ. 25 կ.

16. Եր. Շահազիզ. Մկրտիչ Էմին. գ. 60 կ.

17. Գ. ա. ք. Աղանեանց. Հընկերոնրից. ա. պրակ. գ. 30 կ.

18. Կարալէնկո. Կոյր երաժիշտը.

Թարգմ. Մուշէ վարդապետ. գ. 60 կ.

19. Չորրորդ դարու հայ եկեղեցին գ. 25 կ.

20. Երուանդ Շահազիզ. Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքը. գ. 40 կ.

21. Խ. Յարութիւնեան. Իմ օրագիրը. գ. 25 կ.

22. Մեծ Ներսէս. գ. 25 կ.

23. Գ. Խաչիկոց. Հայոց կրօնական բանաստեղծութիւն գ. 60 կ.

24. Խ. Յարութիւնեան. Ե. Սպիրիկին վիպագիր. գ. 15 կ.

25. Օր. Ն. Աղանեան (Թարգմ.) Սեհացեր. գ. 5 կ.

26. Օ. Շրայնէր. Մատուռի աւերակներում. Թարգմ. Գիւտ ա. ք. Աղանեանց գ. 5 կ.

**ԳԻՆՆ Է 5 ԿՊԿ.**